



**V ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ**

**«ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ»**

*2019թ. մայիսի 16-18-ը, ք. Ծաղկաձոր*

**ԵՐԻՏԱՍԱՐԴ ՆՈՐԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

**ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ**

**ՀՀ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՀՀ ԳԱԱ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ԵՐԵՎԱՆՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ**

**ՀՀ ԳԱԱ Ա. ՆԱԶԱՐՈՎԻ ԱՆՎԱՆ ԵՐԿՐԱՏԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԻՆՏԵՆԵՐԱՅԻՆ ՄԵՅՄՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**«ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊՈ**

**«ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՔՍ» ՀԿ**



## Հարգելի գործընկերներ

Հրավիրում ենք մասնակցելու **2019թ մայիսի 16-18-ը ք. Ծաղկաձորում** կայանալիք «Նորարարությունների կառավարում» V միջազգային երիտասարդական գիտական դպրոցին (այսուհետ՝ Դպրոց):

Դպրոցի նպատակն է նպաստել տաղանդավոր երիտասարդ գիտնականների, հետազոտողների և ուսանողների միավորմանը, աջակցել երիտասարդության նորարարական գործունեության մակարդակի և մասնագիտական իրազեկության բարձրացմանը, նրանց մոտ մտավոր գործունեության արդյունքների հիման վրա բիզնես գաղափարների ձևավորման, նորարարական նախագծման և տեխնոլոգիաների փոխանցման հմտությունների մշակմանը:

Դպրոցի դասընթացի շրջանակներում մասնակիցները հնարավորություն կունենան ծանոթանալ բիզնես առաջարկների կազմման տեխնիկային, զարգացնել բիզնես նախագծերի արդյունավետ պլանավորման և կառավարման կարողություններ, ինչպես նաև տիրապետել մտավոր սեփականության օբյեկտների պահպանման ու կառավարման հիմնային գիտելիքներին:

Դպրոցի ծրագրով երիտասարդ մասնակիցների համար նախատեսված են դասախոսություններ, վարպետության դասեր (master class) և բիզնես խաղեր, որոնք կվարեն նորարարական մենեջմենթի, նախագծերի կառավարման և մտավոր սեփականության իրավունքների պահպանման ոլորտների հրավիրված առաջատար մասնագետներ և փորձագետներ:

Դպրոցին մասնակցության համար կարող են դիմել **մինչև 30 տարեկան** երիտասարդ ուսանողներ, գիտնականներ, ասպիրանտներ, գիտական աշխատողներ, սկսնակ ձեռներեցներ, ինչպես նաև նորարարական ձեռներեցությամբ և մտավոր գործունեության արդյունքների առևտրայնացմամբ հետաքրքրված այլ անձիք:

Դպրոցին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև **2019թ. ապրիլի 29-ը ներառյալ լրացնել մասնակցության էլեկտրոնային հայտը** հետևյալ հղումով՝ <http://bit.ly/2Ue00RP>.

Դպրոցի մասնակցության վճարը կազմում է՝ 15 ԱՄՆ դոլար կամ ՀՀ դրամին համարժեք գումար՝ հաշվարկված ընթացիկ փոխարժեքով:

Դպրոցի մասնակիցներին ընտրությունը կկայանա մրցութային հիմունքներով: Հավանության արժանացած հայտատուները **մինչև սույն թվականի մայիսի 6-ը** կստանան «Նորարարությունների կառավարում» V միջազգային երիտասարդական գիտական դպրոցին մասնակցելու էլեկտրոնային նամակ-հրավերը և մասնակցության վճարի կատարման կարգը: Հրավերը ստանալու օրվան հաջորդող **3 աշխատանքային օրվա** ընթացքում անհրաժեշտ է հաստատել մասնակցության մտադրությունը Դպրոցի [innov.youth.school@gmail.com](mailto:innov.youth.school@gmail.com) էլեկտրոնային հասցեին ուղարկելով տեղեկատվական նամակ և կատարել մասնակցության վճարում:

«Նորարարությունների կառավարում» V միջազգային երիտասարդական գիտական դպրոցի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությանը կարելի է ծանոթանալ միջոցառման ֆեյսբուքյան էջից՝ <https://www.facebook.com/SchoolOfAYoungInnovator/> և Դպրոցի պաշտոնական կայքից հետևյալ հասցեով՝ <https://yisango.wixsite.com/younginnov-arm/>:

**Ծրագիրն իրականացվում է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ֆինանսական աջակցությամբ:**

Հարգանքով՝

Դպրոցի կազմակուրսիտ